ՆԱԽԱԳԻԾ
Կ-058-07.07.2017-ՊԻՄԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ~~Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 332-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում «միջամտելը» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ քրեական գործի լուծման համար նշանակություն ունեցող ապացույցները եւ այլ նյութերը ոչնչացնելու կամ վնասելու եղանակով՝» բառերը:~~

Հոդված 2 . Օրենսգրքի 338-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 1-ին կետում՝ «հանցագործության մեջ մեղադրանքի առնչությամբ» բառերը փոխարինել «հանցագործության փաստի կապակցությամբ հարուցված քրեական գործի վարույթի ~~կամ մեղադրանքի առնչությամբ~~,» բառերով.

2) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված արարքները կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե իր արարքը նշանակություն չէր կարող ունենալ գործի լուծման համար, կամ նա մինչեւ նախաքննության մարմնի կողմից քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը ~~նախնական քննության ավարտը~~ կամ ~~դատական քննության ընթացքում մինչեւ~~ դատարանի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանության մասին, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:»:

Հոդված 3. Օրենսգրքի 339-րդ հոդվածը լրացնել 1.1 մասով՝

«1.1. Նույն արարքը, որը՝

1) կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության փաստի կապակցությամբ հարուցված քրեական գործի վարույթի կամ մեղադրանքի առնչությամբ,

2) կատարվել է շահադիտական դրդումներով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: